

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան

պետական համալսարան» ՊՈԱԿ-ի

ռեկտորի 28.12.2015 թ. թիվ 1035 Լ/Կ հրամանի

### ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ (ՀԱՐԱՏԵՎ) ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 9 24.12.2015թ.

Վանաձոր

2015թ.

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1.1 Շարունակական (հարատև) կրթության կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) «Վանաձորի Հ. Թումանյանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Համալսարան) կառուցվածքային ստորաբաժանում է:

1.2 Շարունակական (հարատև) կրթության կենտրոնի գործունեության իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության 2010թ. փետրվարի 11-ի թիվ 124-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 15-ի նիստի թիվ 43 արձանագրային որոշմամբ հավանության տրված «Հայաստանի Հանրապետությունում ցկյանս ուսումնառության հայեցակարգը», Համալսարանի Շարունակական կրթության կազմակերպման ռազմավարությունը, Համալսարանի 2010-2015թթ. զարգացման հայեցակարգը և այլ նորմատիվ իրավական ակտեր:

1.3 Սույն Կանոնակարգով կարգավորվում են Կենտրոնի խնդիրները, գործառույթները, աշխատանքի կազմակերպման ուղղությունները, կառուցվածքը:

1.4 Կենտրոնն իր աշխատանքների իրականացման նպատակով համագործակցում է Համալսարանի մյուս ստորաբաժանումների հետ:

## 2. ՇԱՐՈՒՆԱԿԱՆ (ՀԱՐԱՏԵՎ) ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՑԹՆԵՐԸ

### 2.1 Կենտրոնի խնդիրներն են՝

2.1.1 Պլանավորել, կազմակերպել Համալսարանի աշխատակիցների վերապատրաստման աշխատանքները,

2.1.2 Պլանավորել և կազմակերպել շարունակական (հարատև) և հեռավար ուսուցում տարբեր թիրախային խմբերի համար,

2.1.3 Ստեղծել, համալրել, համակարգել և կատարելագործել դասընթացների և մասնակիցների վերաբերյալ տեղեկատվական բազան:

### 2.2 Կենտրոնի գործառույթներն են՝

2.2.1 Համալսարանի աշխատակիցների մասնագիտական որակավորման բարձրացումը, վերապատրաստումը,

2.2.2 Համալսարանի աշխատակիցների ընդհանրական, առարկայական, մասնագիտական, գիտական և հետազոտական կարողությունների շարունակական զարգացումը,

2.2.3 լեզուների իմացության իրազեկության համաեվրոպական համակարգի պահանջների հիման վրա տարբեր խմբերի համար լեզվական գիտելիքների և հմտությունների զարգացումը և ամրապնդումը,

2.2.4 աշխատաշուկայի պահանջարկի հիման վրա թիրախային տարբեր խմբերի վերապատրաստման, որակավորման բարձացման և վերաորակավորման դասընթացների կազմակերպումը նորագույն փաթեթային (քեյսային), ինտերնետ և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների արդյունավետ գույակցման և կիրառման միջոցով,

2.2.5 կարճաժամկետ դասընթացների միջոցով սոցիալապես առավել խոցելի խավերի համար զբաղվածության հնարավորության բարձրացումը,

2.2.6 ինտեգրումը լրացուցիչ և շարունակական կրթության միջազգային հանրությանը և զբաղվածության ոլորտի զարգացումներին,

### **3. ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ (ՀԱՐԱՏԵՎ) ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

3.1 Կենտրոնը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է ռեկտորի հրամանով՝ գիտական խորհրդի կողմից ընդունվելուց հետո:

3.2 Կենտրոնի աշխատանքները համակարգում է ղեկավարը, ով նշանակվում և ազատվում է ռեկտորի հրամանով:

3.3 Կենտրոնի ղեկավարն անմիջականորեն ենթարկվում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

3.4 Կենտրոնի աշխատակիցներն իրենց գործառույթները կատարում են աշխատանքային պայմանագրին և պաշտոնի նկարագրին (աշխատանքային գործառույթներին) համապատասխան: